

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՈՒՏԴ 947.925

Ա. Ա. Սահակյան

Երվանդյան մայրաքաղաքի հիմնարկերի պաշտամունքային հայեցակարգը ըստ
Մ. Խորենացու (Երվանդակերտ, Դրասխանակերտ, մ.թ.ա. III-II դդ.)

(Ներկայացված է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Բ. Հարությունյանի կողմից 15/ II 2005)

1. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» (այսուհետ ՄԽ ՀՊ) 2-րդ գրքի՝ Երվանդ թագավորի չորս կառույցների մասին պատմող ԼԹ-ԽԲ գլուխները աչքի են ընկնում մի քանի ներբնագրային հակասություններով.

ա) ԼԹ գլուխը՝ «Յաղագս շինուածոյ Երուանդաշատ քաղաքի», պատմում է նոր մայրաքաղաքի տեղի ընտրության և շինության մասին, սակայն կիսատ է մնում, որովհետև սահմանափակվում է միայն միջնաբերդի ամրացման տվյալներով՝ ոչինչ, ըստ էության, չասելով բուն քաղաքի մասին:

բ) ԽԲ գլուխը՝ «Թէ որպէս շինեաց զԲագարան քաղաք կոոց», պատմում է անվտանգության նպատակներով առանձին հոգևոր կենտրոնի շինության մասին և նշում. «Նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր»: Ինչո՞վ է նման յուր քաղաքին, որը նախորդ գլխի Երվանդաշատն է, եթե վերջինս նկարագրված է միայն միջնաբերդով: Այսինքն, դարձյալ ոչինչ ըստ էության չի ասվում, միայն տպավորություն է ստեղծվում, որ կուռքերը ամրացվում են ավելի փոքր չափի միջնաբերդում, ինչը հակասում է համաժողովրդական պաշտամունքի վայրի վերաբերյալ Երվանդյան ծրագրին:

գ) ԽԲ գլուխը՝ «Վասն ձեռակերտին, որ կոչի Երուանդակերտ», կարծես ինչ-որ ծանոթ նյութի շարունակություն լինի, որն և ակնարկելով՝ ասում է. «Եւ այսպիսի գեղեցկութեան դիր անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածս ունի»: Այսինքն, ըստ էության, նկարագրված քաղաքը անթարթ հայացքով նայում է ինչ-որ թագավորանիստ բարձրավանդակի, որի մասին, չնայած ոչինչ չի ասվում, բայց հասկացվում է, որ հենց դա է նախապես ծանոթ նյութը, որի պատմությունը սկսվել է ԼԹ գլխում և ընդհատվել:

դ) ՄԽ վերականգնած բնագրից երևում է, որ մեզ հասած «Պատմության» գլխավարը հեղինակային չէ, կազմվել է IX-X դդ. ընթացքում, և որ ԽԲ գլուխը եղել է ԼԹ գլխի շարունակությունը՝ որպես մեկ միասնական հանգամանակի պատում Երվանդի քաղա-

քի կառուցման մասին: ԼԹ և ԽԲ գլուխները որպես մեկ ամբողջություն կարդալու դեպքում վերանում են վերոնշյալ ներբնագրային հակասությունները: Մասնավորապես, լուծվում է Երվանդի անունով երկու քաղաքների ընկալման ու տեղադրման տարօրինակ խնդիրը, երկուսի փոխարեն ստանում ենք մեկ մայրաքաղաք՝ անվան երկու տարբերակով (-շատ և -կերտ):

ե) ՄԽ ՀՊ II գրքի ԼԹ գլխի վերնագրում նշված «Երվանդաշատը» և ԽԲ գլխի վերնագրում նշված «Երվանդակերտը» եթե չհաշվենք, ապա բուն հեղինակային բնագրի տվյալ հատվածում կունենանք միայն մեկ «Երվանդակերտ» (II-ԽԲ), իսկ այլ տեղ՝ նաև մեկ «Երվանդաշատ» (III-ԼԱ), մնացած դեպքերում՝ Երվանդի քաղաք (օր. II-ԽԶ, ԽԸ, ԽԹ): Եթե ավելացնենք Երվանդի մասին պատմող հատվածների «Իր քաղաք» արտահայտությունը ևս, ապա հարց կառաջանա՝ ո՞րն է իր կամ Երվանդի քաղաքը վերոնշյալ երկուսից, և մի՞թե Խոբենացին չէր նկատի այդ հարցը, եթե այն իրոք լիներ: Սիանշանակ է, որ եթե երկու Երվանդաքաղաք լիներ, հեղինակն անկասկած ստիպված կլիներ նշել, թե որի մասին է խոսքը, որպեսզի ընթերցողի տարակուսանքը չհարուցեր: Կամ՝ եթե նշվում է, որ Արտաշեսը, հետապնդելով հակառակորդին, գնաց «ի քաղաքն Երուանդայ» և միջօրեից առաջ տեղ հասավ («ի դաստակերտն Երուանդայ») և հրամայեց գործին աղաղակել՝ «Մար ամատ» (հայ. «մարը եկավ»), ուստի և քաղաքը կոչվեց Մարմետ, որպեսզի Երվանդի անունը այդ տեղից վերացվի (II-ԽԶ), մի՞թե պարզ չէ, որ երկու քաղաքի պարագայում այս պատումը կլիներ անհասկանալի, որ Մարմետով մի Երվանդաքաղաքի անունը կփոխվի, մյուսը կմնա նույնը, որ Մարմետը չի կարող դառնալ Երվանդաշատ, իսկ դաստակերտ ասվածը՝ Երվանդակերտ, որովհետև շատ հստակ է, որ տվյալ դեպքում դաստակերտ կոչվում է Մարմետը, որն էլ հայտնի է իբրև Երվանդաշատ:

Վերոբերյալ փաստերը վկայում են այն մասին, որ Երվանդաշատը և Երվանդակերտը միևնույն մայրաքաղաքի անվանական տարբերակներ են, որոնք փոխարինել են նախաերվանդյան Մարմետ անվանը, և ոչ թե հակառակը, ինչպես կարծում է պատմահայրը՝ ժողովրդական ստուգաբանական լեզվագիտության մեջ: Եւ իրոք, Երվանդը բնակիչներով լցնում է հենց Երվանդակերտ քաղաքը (II-ԽԲ), որոնց գոնե մի մասը եղել են Արմավիրից բերված հրեաները, որոնք էլ Երվանդի քաղաքից (II-ԽԹ) տարվել են նորակառույց Արտաշատ՝ Արտաշես թագավորի կողմից: Ուրեմն Երվանդի քաղաքը տվյալ դեպքում Երվանդակերտն է: Փալստոս Բուզանդի «Հայոց պատմությունից» հայտնի է, որ պարսից Շապուհ արքան հայ ու հրեա ընտանիքներ գերեվարեց IV դ. 60-ական թթ. նաև Երվանդաշատից [1]: Այստեղից պարզ երևում է Երվանդակերտի ու Երվանդաշատի նույնությունը: Իսկ եթե նկատենք, որ Երվանդի շինարարության մասին պատմելիս ՄԽ գործածում է միայն Երվանդակերտ անունը (II-ԽԲ), ապա կմնա ասել, որ հեղինակը այդ քաղաքի միջնաբերդը նկարագրելիս (II-ԼԹ) անուն չի տալիս (վերնագիրը անտեսեցինք), ինչն անհնար կլինի պատկերացնել, եթե դրանք տարբեր քաղաքներ լինեին: Հետևաբար արհեստածին ու ավելորդ են բոլոր այն հակասությունները, որոնց մի մասը վերը նշվեց: Դրանք իրականում գոյություն չունեն, քանի որ առաջ են եկել բնագրի թյուրընթեռնումից: Այսու լուծվում է նաև այն հակասությունը, որ կար ԼԹ և Խ գլուխների միջև, ըստ որի՝ պարզ չէր, թե քաղաք-դաստակերտ-ամրոց Բագարանը (հմմ. II-Խ, II-ԽԸ, II-Դ) ինչի նման շինվեց: Այժմ հասկանալի է՝ քաղաք-աչքի նման: Եվ ընդ-

հանրապետ, հարցի հետ կապված բոլոր բնագրային հակասությունների լուծումով Խորենացու տրամաբանական ոճը վերստին ստանում է իր նախկին փայլը:

2. Բնագրագիտականից գատ հիշյալ թյուրընթերցումից առաջ են եկել նաև հնագիտական հակասություններ Երվանդի մայրաքաղաքի երկատման և երկու քաղաքների տեղադրման հարցում (Բ. Առաքելյան, Վ. Հարությունյան, Ժ. Խաչատրյան, Ֆ. Տեր-Մարտիրոսով և այլք):

ա) Երվանդյան միակ քաղաքի խորենացիական նկարագրությունը հստակ է. Երասխի և Ախուրյանի խառնարանից վեր Երասխը ծունկ է տալիս մի բլրի շուրջ, որի վրա կառուցվել է Երվանդի ամրոց-միջնաբերդը, որտեղից երևում է Ախուրյանի գետաբերանը, իսկ Երասխի աջ կողմից, ծնկան շուրջ տարածվել է քաղաք-դաստակերտը՝ այգիներով ու դաշտերով շրջապատված: Հնարավոր է արդյոք մտածել, թե միջնաբերդը կոչվել է Երվանդաշատ, իսկ քաղաքը՝ Երվանդակերտ: Դժվար թե, նման վկայություն չունենք, այդ հատվածում միակ հեղինակային տեղանունն է Երվանդակերտ: Բայց Խորենացին քաղաքի երկու մասերի կառուցումը նկարագրում է իրար շարունակելով, բայց և իրարից առանձնացնելով: Դա երևում է միջնաբերդի ավարտից քաղաքի նկարագրին անցում կատարելիս. «Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի (ոչ թե Երուանդակերտին - Ա.Ս.), գոր յորինեաց նոյն ինքն Երուանդ...»: Քաղցր է ոչ միայն Երվանդակերտի միջնաբերդի, այլև դաստակերտի մասին ասելը, որ նույն Երվանդը կառուցեց, որովհետև հնարավոր է, որ քաղաքի կառուցումը մեկ ուրիշը շարունակեր: Ու շարունակում է նախորդ հատվածի ոճով՝ ասես չընդհատելով պատումը. «Քանզի զմիջոց յովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք»: Իսկ դա նշանակում է, որ եթե մի այլ քաղաքի մասին լինեք խոսքը, պատմիչը կնշեր նրա կառուցման վայրը: Եթե հաշվի առնենք, որ ՄԽ ՀՊ ներկա գլխաբաժանումը և գլուխների վերնագրումը կատարվել է բնագրի վերջին խմբագրության մեջ (IX-X դդ), ապա պարզ կդառնա, որ նշված 4 շինարարական գլուխները (II-ԼԹ, Խ, ԽԱ, ԽԲ) եղել են հեղինակային մեկ հատվածի կազմում: Սակայն, ցավոք, հնագիտության մեջ բնագրի փոփոխությունից բխող հակասություններն անտեսվել են (հմմ. [2], էջ. 39; [3], էջ 63; [4], էջ 283-86; [5], էջ 130-31; [6]): Երկու քաղաքի գոյության համոզմունքը չի սասանվել անգամ Ստ. Ասողիկի «Պատմության» մեջ պահպանված միակ հետագա անվանումից՝ «Երվանդաքար» ([7], էջ 47), և Դյուլորիեի հայտնած կարծիքից. «Դյուլորիեն կարծում է, թե Երվանդաշատ և Երվանդակերտ ոչ թե երկու քաղաք են եղել միմյանցից բաժանված Երասխ գետով, այլ միևնույն քաղաքի պարթևական և հայկական անուններն են» ([8], էջ 84):

Հնագիտական ակնարկներում կրճատվել է նաև Երվանդի քաղաքի կյանքը մինչև 500 տարի: Իրականում, եթե անտեսենք մինչեւ Երվանդյան Մարմետ բնակավայրը, որտեղ անգամ մինչուրարտական և ուրարտական հետքերի հնարավորություն է ենթադրում վաստակավոր հնագետ Գ. Տիրացյանը ([9], էջ 92), ապա կյանքը քաղաքում շարունակվել է նաև IV դարից հետո, անգամ աշխուժացել է VII-IX դդ., հավանաբար մինչև հայտնի երկրաշարժը, որի ամենահայտնի գոհը դարձավ Զվարթնոցի տաճարը:

Ավելի քան հազարամյա կյանքի ընթացքում քաղաքը հաճախ կոչվել է Մարմետ կամ Երվանդաշատ (Բուզանդ, Խորենացի, Անանիա Շիրակացի և այլք), Երվանդակերտ վկայված է միայն Խորենացու կողմից (ինչը անհնար կլինեք, եթե վերջինս լինեք առան-

ձին քաղաք և ոչ մի այլ տեղ չհիշվեր): Եղած վկայություններից կարելի է ենթադրել, որ Երվանդակերտ-Երվանդաշատը եղել է քաղաքի պաշտոնական անունը, իսկ հին անունը՝ Մարմետ, կիրառվել է ավելի շատ ժողովրդական, կենցաղային- գործնական ոլորտում: Իսկ «Երվանդի քաղաք» արտահայտությունը միայն Խորենացու պատմողական ոճի ծնունդ է, որը ևս իր հերթին վկայում է մեկ քաղաքի մասին, այլապես այն գոնե մի անգամ կօգտագործվեր հոգնակի թվով՝ «քաղաքք Երվանդայ» ձևով:

բ) Այն, որ հայագիտությունը ՄԽ ՀՊ բնագրի թյուրընթերցման արդյունքում կարող էր մեկ քաղաքից ստանալ երկուսը և ջանք թափել գտնելու երկրորդի տեղը, երևում է նաև Երվանդի կառուցած մյուս քաղաքի՝ Բագարանի օրինակով: Մոտավորապես նույն «ճակատագրական» ընկալման հետևանքով այս քաղաքից անկախ է մնացել Դրասխանակերտը, որը ևս հնագիտության մեջ արժանացել է իրարամերժ տեղադրումների (հմմ. Ֆ. Տեր-Մարտիրոսովի և Ժ.Խաչատրյանի բանավեճը ([10], էջ 259-68): Մինևույն քաղաքի անվան երկու տարբերակներից հինը և պաշտոնականը Դրասխանակերտն է, իսկ ավելի ուշը և ժողովրդականը, IX դարից նաև պաշտոնականը՝ Բագարանն է: Ասվածի բնագրային հիմնավորումն է համարվում ՄԽ ՀՊ II-ԽԲ և II-Ղ գլուխների հետևյալ տեղիների համադրումը:

1. ՄԽ ՀՊ II-ԼԹ, Խ, ԽԱ, ԽԲ գլուխներում պատմվող Երվանդյան շինարարական աշխատանքներին հաջորդում է այսպիսի տեղեկություն. «Զայս ամենայն գործեցեալսն Երուանդայ (այսինքն՝ Երվանդակերտ-Երվանդաշատը, անտառը, Բագարանը - Ա. Ս.) պարգևե մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, որպէս մտերմաց և արեան կցորդաց ազգին Արշակունեաց, զոր յիրում տեղոջն պատմեսցուք» (II-ԽԲ):

2. Բացելով վերոնշյալ տեղը՝ կարդում ենք. «(Տրդատը - Ա. Ս.) ... տայ նմա (Կամսարին - Ա. Ս.) ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ և զգաւառն Շիրակ, որպէս ազգականի իւրում և մտերիմ հարազատի... յաւելու և այլս պարգևս (Արշավիրին - Ա. Ս.) զքաղաքն Երուանդայ և զնորին գաւառն մինչև ցկատար ձորոյն մեծի... Իսկ Արշաւիր առաւել սիրեալ զգաւառն՝ յիւր անուն կոչէ Արշարունիս, քանզի յառաջ Երասխաձոր կոչէր» (II-Ղ):

Համադրումից պարզ է դառնում, որ Տրդատը նախ նվիրում է Կամսարականներին Երվանդի կառուցած Բագարանը՝ Շիրակ գավառով, ապա, օրեր անց, նվիրում է Երվանդաշատ-Երվանդակերտը՝ Արշարունիք գավառով (անտառը չի նշվում առանձին՝ գավառի մեջ մտնելու կամ հետագայում վերացած լինելու պատճառով): Մեջբերումներից միանշանակ երևում է, որ Բագարանին համապատասխանում է Դրասխանակերտը, որը կոչվում է նաև «Արտաշեսի մեծ դաստակերտ»: Վերջին որակումը նպատակ ունի նախ հավաստելու Արտաշես արքայի ժառանգորդ Տրդատի սեփականատիրական իրավունքը այդ քաղաքի հանդեպ, ուստի և՛ նվիրատվության վավերականությունը, ապա հիշեցնելու, որ երբ Արտաշեսը գրավեց Երվանդի հոգևոր կենտրոնը՝ սպանելով քրմապետ Երվազին, նրա գանձերը բաժին հանեց մարական զորքն ուղարկող պարսից արքային, նրա 500 ծառաներին բաժին տվեց Սմբատ զորավարին, իսկ քաղաքը, բնականաբար, պահեց իրեն, չնայած վերջինիս մասին հատուկ չի նշվում (II-ԽԸ): Այսպիսով՝ Շիրակի կենտրոնը Բագարանն է, որն էլ Արտաշեսի մեծ դաստակերտ Դրասխանակերտն է, դրա համար էլ Դրասխանակերտը Շիրակ գավառի հետ միասին է զուգորդվել

Երվանդաշատին ու նրա գավառ Արշարունիքին՝ կազմելով գավառ-գավառակենտրոն զույգեր:

Ինչպես ասվեց, միևնույն քաղաքի երկու անվանումներից վաղ պաշտոնականը Դրասխանակերտն է, իսկ ժողովրդականը և ավելի ուշ պաշտոնականը՝ Բագարանը: Վաղ պաշտոնական անունը երևի քիչ է գործածվել, դրա համար էլ ունի հատուկ նշանակություններ Եղիշեի և ՄԽ պատմագրքերում, ինչպես նաև Հովհաննես Դրասխանակերտցու անվան մեջ ([11], էջ 78): Ի դեպ, Հովհաննես կաթողիկոսը գուցե կոչվեր ուշ պաշտոնական անվամբ, մանավանդ Բագարանը Բագրատունյաց թագավորության առաջին մայրաքաղաքն էր, բայց նա հավանաբար զգուշացել է VI-VII դդ. Ավանի հակաթոռ կաթողիկոս Հովհաննես Բագարանցու հետ պատահաբար զուգորդվելուց, թեկուզ վերջինս Կոզովտի Բագավան-Բագարանից էր:

Այսպիսով, Բագարանի և Դրասխանակերտի նույնության բնագրային ուղղակի վկայությունն այն է, որ Տրդատ թագավորի կողմից Կամսարականներին տրված քաղաքը առաջին անգամ կոչվում է Բագարան, երկրորդ անգամ՝ Դրասխանակերտ:

3. Դատելով հին անվանաձևից՝ Դրասխանակերտ, պետք է ենթադրել, որ նրա հիմնադիր Երվանդը իր աշխարհիկ մայրաքաղաքը ևս սկզբնապես կոչել է նման ձևով՝ Երվանդակերտ, որին հետո կոչել են նաև -շատ տեղանվանակերտ ածանցով, ինչպես Արտաշատ, Ջարիշատ, Աշտիշատ ևն (հմմ. [12]):

ՄԽ պատմածից երևում է, որ Երվանդ վերջին թագավորը երկու մայրաքաղաքների կառուցումն ու անվանումը կատարել է միասնական մտահղացմամբ, նույն ծրագրի շրջանակում, մեկն իբրև հոգևոր կենտրոն, մյուսն՝ աշխարհիկ, ընդ որում, մեկը մյուսին նման, բայց չափերով տարբեր: Փորձենք վեր հանել այդ մտահղացումը՝ այն հնարավորինս բխեցնելով Երվանդյան Հայաստանի կրոնապաշտամունքային համակարգում շեշտված առասպելաբանական պատկերացումներից:

ՄԽ ՀՊ և այլ տվյալների հիման վրա հայագիտության մեջ (Ս. Աբեղյան, Ս. Հարությունյան, Ա. Պետրոսյան, Ս. Պետրոսյան և այլք) վերականգնվել է Երվանդի աստվածային բնույթը.

ա) Երվանդն ամպրոպային աստված և երկնքի ու երկրի գլխավոր տիրակալ է:

բ) Ունի երկվորյակ եղբայրներին հատուկ հրաշալի ծնունդ (Երվանդ-Երվազ):

գ) Անվան ստուգաբանումն իբրև հնդեվր. Պեր-Հեր ([13], էջ 103-112), իբրև ‘արագ’ ըստ Հյուբշմանի, իբրև հարստության տիրող՝ ըստ Ա. Փերիխանյանի [14], նշում են դիցազնական գծեր:

դ) Երվանդի և Նանե դիցամոր (Նանայ) ամուսնական զույգից ծնվում է ամպրոպային վիշապամարտիկ Վահագնը [15]:

ե) Երկվորյակներից մեծին հատուկ մշակութակերտ բնույթը ([13], էջ 109; [16], էջ 30-31): Անտառի տնկումը, վայրի կենդանիների բազմացումը, մայրի ծառերը և Ծննդոց անտառ անվանումը ակնարկում են առասպելաբանական արարչությունը:

զ) Հայաստանում գտնված Արտաշիսյան սահմանաքարերի արամերեն արձանագրություններում Արտաշես թագավորին տրված «Երվանդական» մականունը ընկալվում է իբրև դիցազնական, աստվածային ծագման:

է) Դեռևս Արամագդից առաջ Հայաստանի գլխավոր աստված, տեր, հայր եղած Երվանդը, որից սերվել է թագավորական և քրմական տոհմը, ի շարս թվարկված հատկանիշների ունեցել է նաև «հրեղեն հայացք», «աչկունք-արեգակունք»:

Երվանդյան կրոնապաշտամունքային համակարգում շեշտված Աչքի առասպելությո՜ւթից մնացել են որոշակի հետքեր.

է-ա) Ըստ ՄԽ՝ Երվանդի քաղաքի հատակագծում պատկերված էր «աչք», որի կառուցվածքային բաղադրիչներն էին՝ բիբ, բոլորակ, արտևանունք, հոնք, ծնոտներ՝ շրթերով, ի վերջո՝ անթթթելի հայեցվածք: ՄԽ համար աչքի նկարագրությունը ունի միայն ոճական, փոխաբերական արժեք, որովհետև նա չի նկատել հայկական ավանդություն պահպանված առասպելաբանական բոլոր տվյալների փոխկապված բնույթը:

է-բ) Երվանդն ուներ զորեղ աչք, որով լուսաբացին պայթեցնում էր որձաքարե վեմեր (Ստ.Ասողիկի կողմից վկայված Երվանդաքար անվանումը ակնհայտորեն պետք է ընկալվեր որպես քաղաքի ավերակ):

է-գ) Երվանդի անվան (հին ձևը՝ Երեւանդ) հնչական անագրամատիկ տարբերակները ակնարկում էին ամպրոպային գլխավոր աստծո հատկանիշներ (հեր-հայր, երիվար-ձի ունեցող, երևացող):

է-դ) Քրմական մեկնաբանության ազդեցությամբ Երվանդ անվան հունական տառադարձումը ընկալվել է որպես նրա յուրօրինակ թարգմանությունը՝ Օրոնտես, որ հայերեն նշանակում է Տեսանողը:

է-ե) Աչքի ժառանգական հատկանիշը կրում են նաև Երվանդի որդին՝ Տիգրան Երվանդյանը՝ իր աչքի կարմիր դրակոնտիկոնով, և թոռը՝ Վահագնը՝ իր աչք-արեգակով:

Աչքի առասպելությոթի այս և այլ հետքերը օգնում են հասկանալ, որ հելլենիստական Հայաստանի թագավոր-աստվածը երկրի աշխարհիկ և հոգևոր կենտրոնները հիմնել է իր անունով ու նմանությամբ, այսինքն՝ «աչք» նշող անունով և աչքի տեսքով, քանի որ Երվանդյան առասպելաձիսական համատեքստում աչքը ուներ որոշակի հմայական նշանակություն:

Եվ իրոք, Երվանդը, որպես թագավոր, իր աշխարհիկ մայրաքաղաքը կոչեց Երվանդակերտ, իսկ ի՞նչ կոչեց, որպես աստված, իր հոգևոր մայրաքաղաքը, մի՞թե Բագարան:

4. ՄԽ նշած Բագարանը ակնհայտորեն հետագա ժողովրդական նկարագրական անվանում է (ինչպես Դիցարան, Սրբավայր), որն էլ ինքը մոտավոր ճշտությամբ ստուգաբանում է (II-իս, հմմ. Բագավանի վերաբերյալ՝ Ագաթանգեղոսի ստուգաբանության հետ. «որ անուանեալ կոչի ի պարթևարէն լեզուէն՝ դիցաւան» [17], § 817): Նման ոչ պաշտոնական անվանում կարող էր տրվել ոչ թե իր բուն կրոնա-պաշտամունքային միջավայրում, այլ նրան հաջորդած նոր մշակութային փուլում, որպիսիք են Արտաշիսյան կամ քրիստոնեական շրջանները:

Թեև Բագարանը կրկնում է աշխարհիկ կենտրոնի հիմնարկերը, ճիշտ կլինի ասել, որ աշխարհիկն է կրկնում հոգևորին: Վերջինս նույն կերպ («նման իւրոյ քաղաքին») հատակագծվում է իբրև «աչք» և անվանվում արդեն ուղղակի իմաստով՝ որպես ագդու, շանթող հայացքի տեր աստծո քաղաք, մոտավորապես ինչպես՝ ‘արեգ-ակն-ա-կերտ’:

Նման կրոնաիմաստաբանական չափանիշին կարող է բավարարել Դրասխանակերտ տեղանունը, որն Ա. Փերիխանյանի կողմից հմտորեն ստուգաբանվում է որպես իրան. **drs* - ‘հայացք’ - **hvan* - ‘արև’ > միջին պրսկ. **darsxvan* > հայ. *Drasxan* ([14], էջ

32-34), ինչպես նաև Յուլակերտ տեղանունը, որն առաջացել է Յուլակակերտից: Սակայն վերջինս բացառվում է, որովհետև ունի հայտնի տեղադրություն Մասիսի ստորոտում և Եղիշեի կողմից Դրասխանակերտի հետ նշվում է միևնույն անվանացանկում Ձողակերտ ձևով (տե՛ս [11], էջ 78-79):

«Դրասխանը» ոչ թե Երվանդ-թագավորի, այլ Երվանդ-աստծո գլխավոր հատկանիշներից է, նրա, այսպես կոչված, քրմական-վարդապետական մակդիրը, որով էլ կոչվում է նոր հոգևոր մայրաքաղաքը:

Այն Երվանդակերտի հետ միասին Արշակունիների կողմից տրվել է Կամսարականներին, առաջինը՝ իբրև Արշարունիքի, երկրորդը՝ Շիրակի կենտրոն, որոնք IX դ. 20-ական թթ., հավանաբար, որպես գանձագին հողեր, ստացան Բագրատունիները: Նրանք իրենց թագավորական իշխանության օրոք Դրասխանակերտը դարձրին առաջին մայրաքաղաք, որտեղից էլ քիչ ավելի ուշ հնարավոր դարձավ ընտրել նոր կաթողիկոս՝ հանձին պատմիչ Հովհաննեսի (IX դ. վերջ):

Այսպիսով, Երվանդ թագավորը կառուցում է ոչ թե չորս, այլ երկու քաղաք՝ Երվանդակերտ (= Երվանդաշատ) և Դրասխանակերտ (= Բագարան):

Մատենադարան

A. A. Саакян

Культовая концепция основания ервандидской столицы согласно Мовсесу Хоренаци (Ервандакерт, Драсханакерт, III - II вв. до н.э.)

Главы 39-42 второй книги “Истории Армении” Мовсеса Хоренаци, повествующие о четырех постройках царя Ерванда, имеют несколько текстологических противоречий, которые привели археологов к поискам двух разных городов Ерванда и отчуждению Багарана от Драсханакерта. Текстологический и культурологический анализ показывает, что царь Ерванд руководствовался единой программой при основании и именовании двух столиц - одной как светского центра (Ервандакерт - Ервандашат), другой как духовного (Драсханакерт - Багаран).

A. A. Sahakyan

The Cult Concept of Yervand's Capital Founding According to Movses Khorenatsi (Yervandakert, Draskhanakert, 3rd - 2nd centuries BC)

There are some textual contradictions in chapters 39-42 of the 2nd book of Movses Khorenatsi's “History of Armenia”, which describe King Yervand's four constructions. These contradictions have induced archaeologists to search for two different Yervand's cities and to differentiate Bagaran from Draskhanakert. Textual and cultural study shows that King Yervand followed a general program when founding and naming the two capitals - one as a secular center (Yervandakert - Yervandashat), the other as a sacral one (Draskhanakert - Bagaran).

Գրականություն

1. *Բուզանդ Փ.* Պատմութիւն Հայոց. Վենետիկ. 1889:
2. *Շահխաթունեանց Յովհ.* Ստորագրութիւնք կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառաց Արարատայ, հ.2, էջմիածին, 1842:
3. *Ալիշան Ղ.* Այրարատ, Վենետիկ, 1890:
4. *Թորամանյան Թ.* Նյութեր հայկական ճարտարապետության, հատ. Ա, Երևան, 1942:
5. *Հակոբյան Թ.* Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Եր. 1960:
6. *Վարդանյան Գ., Դյուստերտիզ Գ.* Հայկական պատմական քարտեզ, Թիֆլիս, 1910:
7. *Ասողիկ Ստ.* Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885:
8. *Առաքելյան Բ.* - ՊԲՀ. 1965.
9. *Тирацян Г. А.* - Культура древней Армении Ереван. 1988.
10. *Խաչատրյան Ժ.* - ՊԲՀ. 2001. N2:
11. *Եղիշէ,* Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1957:
12. *Վարդանյան Ռ.* - Գիտ. աշխատություններ, II, Գյումրի, 1999, էջ 127-31:
13. *Հարությունյան Ս.* Հայ առասպելաբանություն, [Բեյրութ, 2000]:
14. *Периханян А.* - Материалы к этимологическому словарю армянского языка, Ереван. 1993.
15. *Պետրոսյան Ս.* - Լրաբեր հաս. գիտ. 1981. N. 4:
16. *Петросян А.* - Армянский язык и мифология. Ереван. 2002.
17. Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909: